ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 47-Լ **«26»** օգոստոսի **2026թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 09-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի մարտի 25-ի ««Նախագծային ուսուցման հայեցակարգը և ուսուցիչների վերապատրաստման մոդուլը հաստատելու մասին» N 08-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու, նախագծային ուսուցման կազմակերպման ընթացակարգը հաստատելու և գնահատման չափանիշները սահմանելու մասին» N 09-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

«Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2026 թ.-ի օգոստոսի 26-ի
N 47-Լ հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) ուսումնական նախագծերն իրականացվում են Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված պահանջներին համապատասխան և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամաններով:

2. Ուսումնական նախագիծը ուսումնառության գործընթացի մասնակիցների համար որոշակի տևական ժամանակահատվածում առանձնապես ինքնատիպ արժեք ստեղծելու գործընթաց է:

3. Հանրակրթության ոլորտում ուսումնական նախագիծը համագործակցային աշխատանք է, որը մանրակրկիտ պլանավորված է ուսուցման որոշակի նպատակի հասնելու համար:

4. Նախագծերի վրա հիմնված ուսուցումը (այսուհետ՝ ՆՈՒ) ուսուցման մեթոդ է, որի ընթացքում սովորողները տևական աշխատանքի արդյունքում ձեռք են բերում գիտելիքներ և հմտություններ, ուսումնասիրում, վերլուծում և պատասխանում են արդիական և բարդ հարցի, խնդրի կամ մարտահրավերի: Այն դինամիկ մոտեցում է, որի ընթացքում սովորողները ակտիվորեն ուսումնասիրում են իրական աշխարհի խնդիրները և մարտահրավերները և ձեռք են բերում ավելի հիմնավոր գիտելիքներ: Սովորողների մոտ այն զարգացնում է հետազոտական կարողությունները:

5. ՆՈՒ-ի հիմնական բնութագրիչներն են.

1) ՆՈՒ-ն անդրադառնում է իրական և արդիական հարցերի, խնդիրների և (կամ) մարտահրավերների՝ առանց դրանց լուծման կանխորոշված տարբերակի.

2) ՆՈՒ-ն զարգացնում է անհրաժեշտ գիտելիքների իմացություն և հմտությունների տիրապետման մակարդակ.

3) ՆՈՒ-ն պահանջում է քննադատական մտածողություն, խնդիրների լուծում,

համագործակցություն և հաղորդակցման տարբեր ձևեր.

4) դասավանդողն առավելապես հանդես է գալիս որպես ուղղորդող, համակարգող և աջակցող (մոտիվատոր, մոդերատոր և ֆասիլիտատոր).

5) սովորողները մասնակցում են հիմնախնդրի ուսումնասիրությանը.

6) սովորողների մոտ զարգանում են ինքնագնահատման և ինքնաանդրադարձի կարողությունները.

7) վերջնական արդյունքի գնահատումն իրականացվում է սույն կարգով սահմանված չափանիշներին համապատասխան:

6. Ուսումնական նախագիծը պետք է ունենա առարկայական ծրագրերի թեմատիկ բովանդակությունից բխող նպատակ, նկարագիր, պլանավորված գործողություններ, ակնկալվող վերջնարդյունք, ակնկալվող կանխորոշված տևողություն, կիրառվելիք ՏՏ գործիքներ, հնարավոր հետագա ազդեցություն և վերջնարդյունքի կիրառելիություն այլոց կողմից: Այն պետք է ուղղակիորեն կապված լինի ուսումնական թեմատիկ պլանի հետ՝ հանդես գալով որպես ուսումնական ծրագրի բաղկացուցիչ մաս, այլ ոչ թե որպես լրացուցիչ առաջադրանք և միտված լինի Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը և առարկայական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքների ապահովմանը:

7. Ուսումնական նախագիծը պետք է լինի գործողությունների ամբողջություն, այն պետքէ հստակ պլանավորվի և իրականացվի այնպես, որ որևէ առարկայի(ների) շրջանակում իրականացվող ուսումնական նախագծի իրականացման ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և կարողություններն աջակցեն առարկաների ծրագրերի թեմատիկ բովանդակության յուրացմանը:

8. Նախագծային ուսուցումն իրականացվում է համագործակցային եղանակով: Նախագծային աշխատանքները կազմակերպվում են խմբային եղանակով՝ տվյալ դասարանում սովորող նվազագույնը 3 և առավելագույնը 10 սովորողի ընդգրկմամբ, որոնք համագործակցային միջավայրում աշխատում են միևնույն խնդրի լուծման ուղղությամբ: 9-րդ դասարանի «Բնագիտություն» առարկայի ավարտական քննությունը ուսումնական նախագծի միջոցով հանձնելու դեպքում նախագծային աշխատանքի խմբում սովորողների առավելագույն թիվը սահմանվում է 7: Փոքրաթիվ համակազմ ունեցող դպրոցներում նախագծային աշխատանքի

խմբում սովորողների նվազագույն թիվը սահմանվում է 1 սովորող, եթե տվյալ դասարանում սովորողների ընդհանուր թիվը չի գերազանցում 5-ը:

9. Սովորողների խմբերը կարող են ներկայացնել ինչպես միևնույն ուսումնական հաստատությունը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մեկից ավելի ուսումնական հաստատություններ: Այս դեպքում մասնակից բոլոր ուսումնական հաստատությունները ներկայացնող համապատասխան առարկաների ուսուցիչները սովորողների հետ համատեղ կազմում են ուսումնական նախագծի պլան, ժամանակացույց, գործողություններ և այլն, որոնք հաստատվում և նույնությամբ կիրառվում են մասնակից բոլոր խմբերում:

10. Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար (մինչև սեպտեմբերի 5-րդ աշխատանքային օրը՝ 1-ին կիսամյակի, դեկտեմբերին՝ 2–րդ կիսամյակի համար) համապատասխան առարկաների ուսուցիչները առարկայական մեթոդական միավորումների քննարկմանն են ներկայացնում ուսումնական ծրագրի թեմատիկ բովանդակությունից բխող նախագծերի թեմաների առաջարկը:

11. Առաջարկվող թեմաների հիման վրա սովորողների կողմից ընտրությունն իրականացնելուց հետո համապատասխան առարկաների ուսուցիչները սովորողների մասնակցությամբ կազմում են ուսումնական նախագծերի պլանները:

12. Ուսումնական նախագծի պլանին ներկայացվող չափանիշները.

1) նշվում է ուսումնական տարին, կիսամյակը.
2) շարադրվում է ուսումնական նախագծի անվանումը.
3) նշվում է ուսումնական նախագծի իրականացման տևողությունը (շաբաթների քանակը).
4) նշվում է նախատեսված ժամաքանակը.
5) շարադրվում են ուսումնական նախագծի իրականացման փուլերը՝ համապատասխան ժամաքանակով.
6) շարադրվում է ուսումնական նախագծի նպատակը.
7) շարադրվում են ուսումնական նախագծի վերջնարդյունքները.
8) շարադրվում են տվյալ առարկայի (առարկաների) այն թեմայի (թեմաների) վերջնարդյունքները, որոնց վերաբերում է ուսումնական նախագծի թեման.
9) շարադրվում է հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը.
10) շարադրվում են ուղղորդող հարցերը.
11) շարադրվում է ուսումնական նախագծի նկարագիրը.

12) նշվում է ուսումնական նախագծի վերջնարդյունքի (պրոդուկտի) ներկայացման տեսակը և հետազոտության աղբյուրները:

13. Մշակված ուսումնական նախագծի պլանը ներկայացվում է համապատասխան առարկայական մեթոդական միավորմանը, որը քննարկում է այն և հավանություն տալիս, եթե պլանը բավարարում է սույն հավելվածի 12-րդ կետով սահմանված բոլոր չափանիշներին, հակառակ դեպքում՝ նախագծի պլանը չի հաստատվում: Եթե ուսումնական նախագծում ներգրավված են սովորողների խմբեր տարբեր ուսումնական հաստատություններից, ապա ներկայացված պլանը պետք է համատեղ քննարկվի և հավանության արժանանա բոլոր ուսումնական հաստատություններում:

14. Ուսումնական հաստատության ղեկավարը (համատեղ նախագծերի դեպքում՝ ուսումնական հաստատությունների ղեկավարները), հիմնվելով առարկայական մեթոդական միավորումների դրական եզրակացության վրա, հաստատում է նախագծի պլանը:

15. Ուսումնական նախագիծը պետք է ունենա առնվազն 6 շաբաթ տևողություն՝ հստակ պլանավորված փուլերով:

16. Ուսումնական նախագծին մասնակցող բոլոր սովորողները յուրաքանչյուր փուլի համար պետք է ունենան հստակ աշխատանքային բաժանում՝ անհատական կամ խմբային աշխատանքի շրջանակներում, ինչպես նաև սովորողները անհատապես կամ խմբերով պետք է ինքնուրույն իրականացնեն գործնական, հետազոտական և վերլուծական աշխատանք՝ ուղղված սահմանված խնդրի կամ մարտահրավերի հաղթահարման առաջարկներ մշակելուն:

17. Ուսումնական նախագծի արդյունքում պետք է ստեղծվի նյութական և/կամ ոչ նյութական արժեք, որը կիրառելի է այն խնդրի լուծման համար, ինչի շուրջ պլանավորվել և իրականացվել է տվյալ ուսումնական նախագիծը:

18. Ուսումնական նախագծի պլանը և ավարտուն արդյունքը (պրոդուկտի ցուցադրությունը) պետք է տեղադրվի որևէ առցանց միջավայրում (Ուսումնառության կառավարման e-school ազգային հարթակ կամ Հեռավար ուսուցման (Մուդլ) համակարգ կամ Իթվինինգ պորտալ կամ «Պաշարների շտեմարան» կայք և այլն):

19. Ուսումնական նախագծի ղեկավար է հանդիսանում Հաստատությունում տվյալ առարկայի (մեկից ավելի առարկաներից նախագծային աշխատանք իրականացնելու դեպքում՝ առարկաների) ուսուցիչը:

20. Ուսումնական նախագծի ղեկավարը նախագծի ավարտին իրականացված աշխատանքի վերաբերյալ Հաստատության ղեկավարին պետք է ներկայացնի գրավոր հաշվետվություն, որում պետք է արտացոլվեն մասնակիցների ձեռք բերած գիտելիքը, հմտությունները, ուսումնասիրելու և վերլուծելու կարողությունները և այն վերջնարդյունքը, որի ձևավորմանը նպաստել է ուսումնական նախագիծը:

21.Ուսումնական նախագծի գնահատականը (առավելագույնը՝ 10 միավոր) բոլոր մասնակիցների համար լրացվում է էլեկտրոնային մատյանում՝ ուսումնական նախագծի համար հատկացված էջում: Յուրաքանչյուր սովորող պետք է գնահատվի առանձին:

22.Ուսումնական նախագծի գնահատումն իրականացվում է 3 բաղադրիչների հիման վրա՝ ընթացք, բովանդակություն, ներկայացում:

1) Ընթացք – 3 միավոր.

ա.նախապատրաստական փուլ (թեմայի ընտրության, նպատակի սահմանման աշխատանքներում սովորողի մասնակցություն) – 0,5 միավոր.

բ. բուն ընթացք (խնդիրների ձևակերպման, հարցերի մշակման, պլանի կազմման, ժամանակի բաշխման, ռազմավարությունների ընտրության, աղբյուրների ուսումնասիրության, տեղեկության հավաքագրման և վերլուծության աշխատանքներում սովորողի մասնակցություն) - 2 միավոր.

գ.ավարտ կամ ամփոփում (վերջնական մշակման և աշխատանքի ձևավորման աշխատանքներում սովորողի մասնակցություն) – 0,5 միավոր:

2) Բովանդակություն– 4 միավոր.

ա.սովորողի կողմից ներկայացված նյութի համապատասխանությունը թեմային – 1,5 միավոր.

բ.սովորողի կողմից ներկայացված նյութի ամբողջականությունը - 1 միավոր.

գ.սովորողի կողմից ներկայացված նյութի հիմնավորվածությունը - 1 միավոր.

դ.սովորողի կողմից ներկայացված նյութի գիտականությունը – 0,5 միավոր:

3) Ներկայացում – 3 միավոր.

ա.սովորողի կողմից ներկայացման համար ընտրված ձևը/միջոցը (սահիկաշար, ֆիլմ-հոլովակ, երաժշտություն, համերգ, նկար, պաստառ, գրքույկ, բեմականացում և այլն) – 1,5 միավոր.

բ.սովորողի կողմից նյութի խոսքային ներկայացումը– 1,5 միավոր:

23.Կախված ուսումնական նախագծի տեսակից, թեմայից, հիմնախնդրից (ավարտուն արդյունքից (պրոդուկտից)՝ գնահատման սանդղակները կարող են տարբերվել, հետևաբար՝

յուրաքանչյուր աշխատանքի համար անհրաժեշտ է առաջնորդվել սույն կետի պահանջներով, մշակել համապատասխան սանդղակ կամ օգտագործել պաշարների շտեմարանում տեղադրված սանդղակներից որևէ մեկը:

24.Ուսումնական նախագիծը պետք է գնահատվի նախագծում ընդգրկված բոլոր դասավանդողների մասնակցությամբ մշակված գնահատման սանդղակի կիրառմամբ:

25. Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում 9-րդ դասարանի «Բնագիտություն» (սովորողի ընտրությամբ՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից որևէ մեկը) առարկայի ավարտական քննությունն ուսումնական նախագծի միջոցով հանձնելու դեպքում յուրաքանչյուր սովորող պետք է գնահատվի առանձին, 20 միավորային համակարգով՝ հետևյալ չափանիշներով.

1) նախագծին մասնակցություն, համագործակցություն, ներդրում (8 միավոր).

1 միավոր	Մասնակցել է հանդիպումների և քննարկումների առնվազն մեկ քառորդին, դժվար է համագործակցել թիմի անդամների հետ:
2 միավոր	Մասնակցել է հանդիպումների և քննարկումների առնվազն մեկ քառորդին, որոշ չափով համագործակցել է թիմի անդամների հետ:
3 միավոր	Մասնակցել է հանդիպումների և քննարկումների առնվազն կեսին, դժվար է ներգրավվել աշխատանքներում, դժվարացել է կատարել հանձնարարված խնդիրները:
4 միավոր	Մասնակցել է հանդիպումների և քննարկումների առնվազն կեսին, որոշ չափով ներգրավվել է աշխատանքներում, բավարար չափով կատարել է հանձնարարված խնդիրները:
5 միավոր	Մասնակցել է գրեթե բոլոր հանդիպումներին և քննարկումներին, որոշ չափով ներգրավվել է աշխատանքներում, բավարար չափով կատարել է հանձնարարված խնդիրները:
6 միավոր	Մասնակցել է գրեթե բոլոր հանդիպումներին և քննարկումներին, բավարար չափով ներգրավվել է աշխատանքներում և կատարել է հանձնարարված խնդիրները:
7 միավոր	Ակտիվորեն մասնակցել է բոլոր հանդիպումներին և քննարկումներին, լիարժեք ներգրավվել է աշխատանքներում և կատարել իր առջև դրված բոլոր խնդիրները:

8 միավոր	Ակտիվորեն մասնակցել է բոլոր հանդիպումներին և քննարկումներին, լիարժեք ներգրավվել է աշխատանքներում և կատարել իր առջև դրված բոլոր խնդիրները, նախաձեռնել է արդյունավետ և նպատակային համագործակցություն թիմի բոլոր անդամների հետ:

2) նախագծի բովանդակության և ավարտուն արդյունքի ներկայացում (8 միավոր).

1 միավոր	Ուսումնասիրությունները քիչ են առնչվում հիմնախնդրին, բացակայում է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը, առկա են բովանդակային սխալներ:
2 միավոր	Ուսումնասիրությունները մասամբ են առնչվում հիմնախնդրին, նյութի շարադրանքն ինչ-որ չափով տրամաբանական է, առանձին բաղադրիչներ որոշ չափով անհասկանալի են:
3 միավոր	Ուսումնասիրությունները հիմնականում առնչվում են հիմնախնդրին, նյութի շարադրանքը որոշ չափով տրամաբանական է, առանձին բաղկացուցիչ մասերը մասամբ են փոխլրացնում իրար:
4 միավոր	Ուսումնասիրությունները հիմնականում առնչվում են հիմնախնդրին, նյութի շարադրանքը տրամաբանական է, առանձին բաղկացուցիչ մասերը հիմնականում փոխլրացնում են իրար, նյութերում բացակայում են մեդիա աղբյուրներ, մուլտիմեդիոն նյութեր, հղումներ:
5 միավոր	Սովորողի կողմից կատարված ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին, նյութի շարադրանքը տրամաբանական է, բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար, ներկայացված նյութը բազմազան է, սովորողի խոսքում առկա են հիմնավորումներ, նյութերում օգտագործված է մեկ-երկու տեղեկատվության աղբյուր՝ հղումներով, մուլտիմեդիոն նյութերով:
6 միավոր	Սովորողի կողմից կատարված ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին, նյութի շարադրանքը տրամաբանական է, բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար, ներկայացված նյութը բազմազան է, սովորողի խոսքը հիմնավորված է, նյութերում օգտագործված են բավարար թվով տեղեկատվության աղբյուրներ՝ հղումներով, մուլտիմեդիոն նյութերով:
7 միավոր	Սովորողի կողմից կատարված ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին, նյութի շարադրանքը տրամաբանական է, բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար, ներկայացված նյութը բազմազան է, սովորողի խոսքը հիմնավորված է, նյութերում օգտագործված են մեդիա աղբյուրներ՝ իրենց հղումներով, մեդիա նյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, նկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ, և կիրառված մուլտիմեդիոն տարրերը հիմնականում հասկանալի են դարձնում հարցերի ընկալումը:

8 միավոր	Սովորողի կողմից կատարված ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին, նյութի շարադրանքը տրամաբանական է, բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար, ներկայացված նյութը բազմազան է, սովորողի խոսքը հիմնավորված է, նյութերում օգտագործված են մեդիա աղբյուրներ՝ իրենց հղումներով, մեդիա նյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, նկարներ, անիմացիաներ, տեսանյութեր, վիճակագրական տվյալներ, սոցիալական հարցումներ, ձայնագրություններ, և մուլտիմեդիոն տարրերն ընդգծում և լիովին հասկանալի են դարձնում նյութի բովանդակությունը:

3) գիտելիքների ստուգում (4 միավոր).

ա. Գիտելիքների ստուգումը կազմակերպվում է նախագծի իրականացման վերջին շաբաթվա ընթացքում:

բ. Գիտելիքների ստուգման եղանակը սահմանվում է նախագծի կազմակերպման պլանում:

գ. Գիտելիքների ստուգումը գնահատվում է առավելագույնը 4 միավորով:

4) Սովորողի՝ ուսումնական նախագծի գնահատականը լրացվում է էլեկտրոնային մատյանում՝ որպես ավարտական քննության գնահատական, և արտացոլվում է ավարտական վկայականում:»: